

Մարզպետի տեղակալ Վ. Դավթյանը այցելել է Գորիսի տարածաշրջան

Հունիսի 25-ից 27-ը ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանը Գորիսի տարածաշրջան կատարած աշխատանքային այցի շրջանակներում այցելել է Շինուհայր, Խոտ, Հալիձոր գյուղական համայնքներ, կատարել այդ համայնքների նախադպրոցական ուսումնական հաստատությունների սանիտարահիգիենիկ վիճակի ուսումնասիրություններ:

Գորիս քաղաքային համայնքում Վ. Դավթյանը մասնակցել է Վազգեն Սարգսյանի անվան մանկապարտեզի ավարտական միջոցառմանը: ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի հանձնարարականով մարզպետի տեղակալ Վ. Դավթյանը, Գորիս քաղաքային համայնքի ղեկավար Վ.Ադունցը և Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ռ. Ավետիսյանը Գորիս քաղաքային համայնքի թվով յոթ նախադպրոցական ուսումնական հաստատություններում կատարել են սանիտարահիգիենիկ վիճակի՝ սննդի կառուցահատվածի կազմի ու մակերեսների, խոհանոցների, ինչպես նաև խմբերի սանիտարատեխնիկական սարքավորումների քանակի և տեխնիկական վիճակի ուսումնասիրություններ: